Նախապատմություն

Շատերս համաձայն ենք, որ մեր տնտեսություններն ու կենսակերպը պետք է զարգանան ավելի կանաչ ճանապարհով:

Ի՞նչ է նշանակում կանաչ տնտեսությունը: Ի՞նչ հնարավորություններ կան կայուն զարգացումը խթանելու համար: Ի՞նչ մարտահրավերներ են սպասվում այս ճանապարհին:

Դուք արդեն կատարել եք առաջին քայլը այս ճանապարհին՝ սկսելով մտածել այս հարցերի շուրջ: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը նշեց, որ «նրանք, ովքեր ճիշտ ժամանակին կգիտակցեն ներառական կանաչ տնտեսության հեռանկարները, առաջատար դեր կունենան 21- ՐԴ դարի տնտեսության մեջ»:

Այս անվճար էլեկտրոնային դասընթացը նախատեսված է ձեզ համար որպես կողմնացույց, որով կարող եք առաջնորդվել ներառական կանաչ

տնտեսությունների վերաբերյալ հիմնարար հարցերի պատասխաններ փնտրելիս: Դասընթացը մշակվել է Կանաչ տնտեսության ուղղությամբ գործողությունների գործընկերությունը (PAGE, ԿՏԳԳ) շրջանակներում, որը միավորում է ՄԱԿ-ի հինգ գործակալություններ՝ ՄԱԿ-ի բնապահպանական ծրագիր, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն և ՄԱԿ-ի Վերապատրաստման և հետազոտությունների ինստիտուտ (UNITAR): ԿՏԳՆ-ն աշխատում է տնտեսական քաղաքականության և գործելակերպերի հիմքում դնել կայունության գաղափարը՝ 2030-ի օրակարգի առաջխաղացման նպատակով (www.un-page.org).

Թիրախային լսարան

Դասընթացը տրամադրում է հստակ, հակիրճ և արդի տեղեկատվություն յուրաքանչյուրին, ով ցանկանում է ընդհանուր պատկերացում կազմել ներառական կանաչ տնտեսությունների մասին: Դասընթացը կարող է հատուկ հետաքրքրություն ներկայացնել հետևյալ լսարանների համար.

- Նախարարությունների, գերատեսչությունների և տեղական ինքնակառավարման մարմինների պետական ծառայողներ
- Մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների բնապահպանական ոլորտի ղեկավարներ
- Ֆակուլտետներ, հետազոտողներ և ուսանողներ
- Հետաքրքրված քաղաքացիներ

Ուսուցման նպատակները

Դասընթացը հնարավորություն է տալիս սովորողներին ծանոթանալ ներառական կանաչ տնտեսության գաղափարին և հիմնական հասկացություններին: Այն դիտարկում է հնարավորությունները, մարտահրավերները գլոբալ և ազգային մակարդակներում՝ ցածր ածխածնային, ռեսուրսների արդյունավետ և սոցիալապես ներառական զարգացման հասնելու համար:

Դասընթացն ավարտելուց հետո մասնակիցները կկարողանան.

- Նկարագրել ներառական կանաչ տնտեսության իրագործման հիմքում ընկած գաղափարը և հիմնական հասկացությունները և տարբերությունը ավանդական գործելաոճերի համեմատ
- Բացահայտել ազգային տնտեսությունների կանաչ անցման հնարավորությունները
- Բնութագրել առանցքային ոլորտների հիմնական հնարավորություններն ու մարտահրավերները
- Ներկայացնել ազգային ռազմավարության և ներառական կանաչ տնտեսության առաջխաղացման պլանավորման օրինակներ
- Տարբերակել ներառական կանաչ տնտեսությանն աջակցող միջազգային շրջանակներն ու նախաձեռնությունները

Մեթոդաբանություն և ձևաչափ

Դասընթացը կազմակերպված է ինքնավար կերպով և առանց դասընթացի մոդերատորի: Այն բաժանված է հինգ մոդուլի, որոնք կօգնեն հասնել ուսուցման նպատակներին: Մոդուլներն առանձին են:

Թեև առաջարկվում է մոդուլների կատարման հաջորդականություն, սակայն մասնակիցները կարող են ըստ իրենց նախընտրության ընտրել մոդուլների հերթականությունը: Դասընթացի ողջ ընթացքում մասնակիցներին կառաջարկվեն հղումներ և հրապարակումներ ներառական կանաչ տնտեսության վերաբերյալ, եթե ցանկություն կա ավելի խորը ուսումնասիրելու տվյալ թեման: Բառարանը պարունակում է համապատասխան հասկացությունների և տեխնիկական տերմինների սահմանումներ:

Յուրաքանչյուր մոդուլում ներկայացված է ինտերակտիվ դաս, տեսանյութ և հարցաշար:

Ինտերակտիվ դասերը ծառայում են մոդուլի ուսուցման նպատակների իրագործմանը, բովանդակում են շուրջ 30 սլայդ, որոնք համալրված են դեպքերի ուսումնասիրություններով, տեսանյութերով, արտաքին հղումներով և վարժություններով: Դասերը ամբողջությամբ ավարտելու համար կպահանջվի մոտավորապես 1 ժամ:

Տեսանյութերը մասնակիցներին հրավիրում են «ուղևորություն» կատարել՝ երկու լավ ընկերների ընկերակցությամբ: Այս ընկերները կպատմեն տնտեսական, սոցիալական և բնապահպանական տարբեր իրադրությունների մասին, որոնց պատահում են առօրյա կյանքում, ինչպես նաև կներկայացնեն կանաչ տնտեսության հասկացություններն ու կիրառությունները, որոնք քննարկվում են մոդուլներում: Սա քաղաքականություն մշակողներ կամ դասախոսներ չեն, սակայն իրապես հետաքրքրված են հասկանալու, թե ինչպես կարելի է հասնել տնտեսության ավելի ռեսուրսարդյունավետ, արդարացի և ցածր ածխածնային վերափոխման:

Հարցաշարերը օգնում են գնահատել յուրաքանչյուր մոդուլի ուսուցման նպատակների իրագործումը: Դրանք կարող եք կատարել ցանկացած ժամանակ: Յուրաքանչյուր հարցաշարի համար տրվում է առավելագույնը երեք հնարավոր փորձ: Հինգ մոդուլի հարցաշարերից յուրաքանչյուրը առնվազն 70% -ով անցնելուց հետո, մասնակիցը

կարող է դասընթացի գլխավոր էջից ներբեռնել ավարտական սերտիֆիկատ:

Մասնակիցներին կառաջարկվի հետադարձ կապի միջոցով կարծիք հայտնել դասընթացի վերաբերյալ՝ լրացնելով հարցաթերթիկ:

Սերտիֆիկացում

Ավարտական սերտիֆիկատ ստանալու համար պետք է անցնել բոլոր հինգ մոդուլները և հաջող արդյունքներով ավարտել բոլոր համապատասխան հարցաշարերը:

Դասընթացի կառուցվածքը և բովանդակությունը

Դասընթացը կառուցված է հինգ մոդուլից.

1. **Ներկա իրավիճակի մասին պատկերացում.** Ներառական կանաչ տնտեսությունը զարգացնելու գաղափարական հիմքը
2. **Գործիքակազմի դիտարկում.** Կառուցվածքային փոփոխությունների համար պայմանների ստեղծումը
3. **Դեպի ուր ենք գնում.** Բարձր «կանաչ» ներուժ ունեցող առանցքային ոլորտներ
4. **Ուղու ձևավորում.** Կանաչ տնտեսության քաղաքականության նպատակների իրագործման ռազմավարություն և պլանավորում
5. **Նպաստավոր միջավայր.** Ներառական կանաչ տնտեսություններին աջակցող միջազգային շրջանակներ և նախաձեռնություններ

Մոդուլ 1.

Ներկա իրավիճակի մասին պատկերացում. Ներառական կանաչ տնտեսությունը զարգացնելու գաղափարական հիմքը

Ուսուցման նպատակները

Մոդուլն ավարտելուց հետո մասնակիցները կկարողանան.

- Դատողություններ անել այն մասին, թե ինչպես տնտեսական քաղաքականությունը կարող է խթանել տնտեսական աճը `միաժամանակ բարելավելով շրջակա միջավայրի և սոցիալական պայմանները
- Նկարագրել ներառական կանաչ տնտեսությունների զարգացման հիմնավորումը
- Պատկերացնել ներառական կանաչ տնտեսության գաղափարի և 2030 օրակարգի կապը

Բաժիններ

1. Վերանայել տնտեսական պարադիգմը
2. Կանաչ անցում կատարելու հիմնավորումը
3. 2030 օրակարգը և ինչպես են ներառական կանաչ տնտեսությունները նպաստում դրան

Մոդուլ 2.

Գործիքակազմի դիտարկում. Կառուցվածքային փոփոխությունների համար պայմանների ստեղծումը

Ուսուցման նպատակները

Մոդուլն ավարտելուց հետո մասնակիցները կկարողանան.

- Տարբերակել ներառական կանաչ տնտեսությունները խթանող համապատասխան քաղաքականության գործիքները
- Բացատրել մասնավոր ֆինանսների կարևորությունը ներառական կանաչ տնտեսությունների իրագործման համար
- Նշել, թե ինչպես կարողությունների զարգացումը կարող է աջակցել կանաչ անցմանը

Բաժիններ

1. Ավելի խելացի պետական ֆինանսավորման խթանում
2. Հզոր կանոնակարգային շրջանակների ձևավորում
3. Միջազգային կարգավորող մեխանիզմներ
4. Մասնավոր ֆինանսական ռեսուրսների հավաքագրում
5. Փոփոխության մասնակիցների համար նպաստավոր պայմանների ստեղծում կարողությունների զարգացման միջոցով

Մոդուլ 3.

Դեպի ուր ենք գնում. Բարձր «կանաչ» ներուժ ունեցող առանցքային ոլորտներ

Ուսուցման նպատակները

Մոդուլն ավարտելուց հետո մասնակիցները կկարողանան.

- Բացահայտել բարձր «Կանաչ» ներուժ ունեցող առանցքային ոլորտները
- Նշել առանցքային ոլորտների կանաչ անցման հիմնական հնարավորություններն ու մարտահրավերները
- Նախանշել կանաչ անցման համար կարևոր միջամտության տարբերակները

Բաժիններ

1. Կայուն զարգացման ազգային համատեքստ
2. Ներդրումներ բնական կապիտալում
3. Ներդրումներ կառուցված կապիտալում

Մոդուլ 4.

Ուղու ձևավորում. Կանաչ տնտեսության քաղաքականության նպատակների իրագործման ռազմավարություն և պլանավորում

Ուսուցման նպատակները

Մոդուլն ավարտելուց հետո մասնակիցները կկարողանան.

- Պատկերացնել տարբեր շահագրգիռ կողմերի դերը կանաչ անցման գործընթացում
- Բացահայտել մասնակցային գործընթացի ապահովման մոտեցումները
- Ներկայացնել ազգային ռազմավարության և պլանավորման օրինակներ

Բաժիններ

1. Շահագրգիռ կողմերի ներգրավումը կանաչ անցման գործընթացում
2. Էկոլոգիական նկատառումների ինտեգրումը զարգացման պլանավորման գործընթացում

Մոդուլ 5.

Նպաստավոր միջավայր. Ներառական կանաչ տնտեսություններին աջակցող միջազգային շրջանակներ և նախաձեռնություններ

Ուսուցման նպատակները

Մոդուլն ավարտելուց հետո մասնակիցները կկարողանան.

- Նկարագրել միջազգային կարևոր շրջանակները, որոնք օգնում են առաջնորդել գործողությունները դեպի ներառական կանաչ տնտեսություններ
- Պատկերացում կազմել զարգացման ֆինանսավորման հաստատությունների կողմից կանաչ տնտեսության նպատակով ձեռնարկվող միջոցների վերաբերյալ
- Բնութագրել աջակցության նախաձեռնությունները գլոբալ և տարածաշրջանային մակարդակում

Բաժիններ

1. Կանաչ անցման ուղեցույց հանդիսացող միջազգային շրջանակներ
2. Զարգացման ֆինանսավորում ներառական կանաչ տնտեսության համար
3. Ներառական կանաչ տնտեսության նախաձեռնություններ աշխարհի տարբեր երկրներում